

ՀԱՅ ԱԿԱՆԱՎՈՐ ՊԱՏՄԱԲԱՆ-ՔԱՐՏԵԶԱԳԵՏԸ

(ՀՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Տ. Երեմյանի ծննդյան 100-ամյակի առթիվ)



Ակադեմիկոս Սուրեն Երեմյանը իր ավելի քան կեսդարյա գիտական գործունեությամբ կամրջեց հայ պատմագիտության անցյալը, ներկան և ապագան: Սուրեն Երեմյանի պատմական հայեցակարգը առավել ցայտուն դրսևորում ստացավ պատմական քարտեզագրության բնագավառում, որի արգասիքն են նրա ստեղծած պատմական ատլասները և քարտեզները:

Մեծանուն պատմաբան-քարտեզագետ Սուրեն Երեմյանի մանրակրկիտ աշխատանքի շնորհիվ հայ ժողովրդի հին և միջնադարյան պատմության կարևորագույն դարաշրջաններն արտացոլող պատմական քարտեզներում շեշտադրվեց Հայաստանի կենտրոնական դիրքը առաջավորասիական տարածաշրջանում: Հայկական և օտար սկզբնաղբյուրների հիման վրա XX դ. 30-40-ական թթ. լույս տեսան Ս. Երեմյանի

հեղինակած՝ «Անդրկովկասի առևտրական ճանապարհները IV դ. վերջում ըստ *Պևտինգերյան քարտեզի* և Անանուն Ռավեննացու», «Անդրկովկասի պետությունները (մ.թ.ա. I-X դդ.)» քարտեզները: Բարձր գնահատականի արժանացավ 1952 թ. Սուրեն Երեմյանի հեղինակած «Հայ ժողովրդի պատմության ատլասը», որը պարունակում է «Հայկական լեռնաշխարհ», «Հայաստանը մ.թ.ա. II-I դդ.», «Հայաստանը V-VII դդ.», «Հայաստանը X դ. վերջին և XI դ. սկզբին» քարտեզները: Նա շարունակեց Հայոց պատմության թեմատիկ քարտեզների շարքը (մ.թ.ա. IX դ. մինչև մ.թ. XX դ. առաջին տասնամյակները), որոնք տպագրվեցին «Հայկական ՄՍՀ ատլասում» (Ե., 1961): Քարտեզների ժամանակագրական լայն ընդգրկումը Ս. Երեմյանի աշխատությունների կարևոր առանձնահատկությունն է:

Համադրելով անտիկ քարտեզագրական սկզբնաղբյուրների, հատկապես Կլավդիոս Պտղոմեոսի «Աշխարհագրության ձեռնարկի» տվյալները Մովսես Խորենացու և նրա գործը շարունակող Անանիա Շիրակացու «Աշխարհացոյցի» տեղեկություններին՝ Սուրեն Երեմյանը վերստեղծեց Մեծ Հայքի թագավորության և Պտղոմեոսի *Ասիայի երրորդ քարտեզի* բովանդակած *Մեծ Հայքի, Կողքիսի, Վիրքի և Աղուանքի* քարտեզագրական պատկերները: Այս ամենի շնորհիվ ակադեմիկոս Երեմյանը ստեղծեց մեծարժեք՝ «Հայաստանը ըստ Աշխարհացոյցի» գիրքն ու քարտեզը (Ե., 1963): Հեղինակը նաև ձեռնամուխ եղավ «Աշխարհացոյցի» սկզբնական բնագրի վերականգնմանը, հրատարակեց *Աշխարհի ատլասի* 15 քարտեզներից մի քանիսը: Նա վերականգնեց նաև «հայտնի աշխարհի» գլոբուսը՝ ըստ «*Աշխարհացոյցի*»:

Պատմական քարտեզագրությունը՝ որպես մեկ հայեցակարգով գրված բազմադարյան պատմության արտահայտչամիջոց, քարտեզների փոխկապակցված շարք ստեղծելու հնարավորություն է ընձեռում: Սուրեն Երեմյանի կազմած

ամեն մի պատմական քարտեզ շարունակությունն է թեմատիկորեն նախորդող քարտեզի, որով

և կապեր են ստեղծվում տարբեր դարաշրջանների պատմության միջև և ընդհանուր շղթայի մեջ դրվում պատմաքաղաքական և սոցիալ-տրնտեսական երևույթները, ժողովրդագրական տեղաշարժերը, պետականության զարգացումը, ազատագրական պայքարը, մշակութային արժեքները՝ քարտեզների միջոցով Հայկական լեռնաշխարհի տարածքում փաստագրելով բնիկ հայ ժողովրդի պատմությունը:

Ակադեմիկոս Երեմյանի ստեղծած քարտեզներն իրենց մնայուն տեղը գրավեցին պատմական քարտեզագրության գանձարանում: Դրանք տպագրվեցին ԽՍՀՄ պատմության ակադեմիական հրատարակությունում (1966 թ.), Հին Արևելքի պատմությունն ձեռնարկում (Ե., 1979), Հայ ժողովրդի պատմության ակադեմիական 8 հատորյա համապատասխան հատորներում (Ե., 1971-1984) և այլ հրատարակություններում:

Սուրեն Երեմյանի՝ Հայկական լեռնաշխարհը և Մեծ Հայքը բովանդակող քարտեզներն իրենց ճշգրտությամբ գիտական և հասարակական-քաղաքական ասպարեզներում ծառայում են պատմագիտական խնդիրների լուծմանը, նոր սերունդների պատմական հիշողության պահպանմանը և աշխարհին հայոց տարածքների պատմական պատկերի ճշմարտացի ներկայացմանը: Ակադեմիկոս Սուրեն Երեմյանը ողջ կյանքում հավատարիմ մնաց իր կոչմանը՝ ստեղծագործելով պատմական քարտեզագրության ասպարեզում: Հայաստանի պատմության տարբեր դարաշրջաններին (սկսած մ.թ.ա. IX դարից մինչև միջնադար) նվիրված և վերջին տարիներին հրապարակված մեծածավալ քարտեզների թվում առանձնակի տեղ ունի Հայոց պետության հզորագույն ժամանակաշրջանը պատկերող՝ Տիգրան II Մեծի տերությանը նվիրված քարտեզը:

Ն. Մառի և Հ. Օրբելու աշակերտը, Ն. Ադունցի և Հ. Մանանդյանի մշակած ավանդույթները շարունակող մեր Մեծ ուսուցիչ ակադեմիկոս Սուրեն Երեմյանը խոշոր ավանդ ունեցավ պատմական աշխարհագրության ու քարտեզագրության հայագիտական դպրոցի առաջընթացում: Նրա գործը և անմոռաց հիշատակը անկորնչելի արժեք կմնան պատմաբան-քարտեզագիրների նոր սերունդների համար:

ԴԱՆԻԵԼՅԱՆ Է. Լ.

Պատմական գիտությունների դոկտոր